

«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ

Հաստիքը՝ Ինժեներատեխնոլոգիական բաժնի ղեկավար

Աշխատաժամանակ՝ լրիվ դրույք

Տևողություն՝ 1 տարի, այնուհետև մինչև 3 տարի

Դիմելու վերջնաժամկետ՝ 30.12.2021

Վայր՝ ք. Երևան

Աշխատանքի նկարագրություն՝

Բաժնի հիմնական գործունեությունն է արագացուցչի համակարգերի և ենթահամակարգերի բաղադրիչների նախագծումը, պատրաստումը, գնումը, փորձարկումը, տեղադրումը և սպասարկումը: Բաժինը պատասխանատու է նաև այլ լաբորատորիաներում օգտագործվող մեխանիկական, փորձարարական բաղադրիչների նախագծման, պատրաստման, պահպանման և արդիականացման համար: Թեկնածուն պետք է կազմակերպի բաժնի աշխատանքը, համագործակցի այլ լաբորատորիաների հետ՝ աշխատանքային գործընթացը համաժամանակացնելու համար, պետք է որոշումներ կայացնի և պատասխանատվություն կրի համակարգերի և սարքավորումների համար: «ՔԵՆԴԼ» ՍՀԻ-ի գործունեությանը միանալու համար թեկնածուն պետք է ունենա համապատասխան հմտություններ՝ մասնակցելու/անցկացնելու վակուումային համակարգերի վերաբերյալ կազմակերպվող տեղական և միջազգային ուսանողական գործնական դասընթացներ: Բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի թեզերի ղեկավարումը կդիտվի որպես առավելություն:

❖ Հիմնական պարտականություններ՝

- Որոշում է բաժնի տեխնիկական քաղաքականությունն ու ուղղությունները
- Ապահովում է արտադրության արդյունավետության և աշխատուժի արտադրողականության բարձրացում, ծախսերի կրճատում, արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, կատարված աշխատանքի և դրա արդյունքների համապատասխանություն պահանջվող մակարդակին և որակին
- Կազմակերպում և պլանավորում է փորձեր ճարտարագիտական և տեխնիկական բաժնի լաբորատորիաներում
- Կազմակերպում և պլանավորում է վակուումի, հովացման և այլ համակարգերի ու սարքավորումների սպասարկում, վերանորոգում և արդիականացում
- Վերահսկում է նախագծման, ինժեներական և տեխնոլոգիական կարգապահության, աշխատանքի անվտանգության, սանիտարական և հրդեհային անվտանգության, շրջակա միջավայրի, ինչպես նաև տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմինների պահանջներին համապատասխանությունը:
- Ապահովում է տեխնիկական փաստաթղթերի պատրաստում
- Կազմակերպում է գիտական հետազոտություններ և փորձեր, նոր սարքավորումների և տեխնոլոգիաների փորձարկումներ
- Կազմակերպում է ինժեներների ուսուցում և ապահովում անձնակազմի շարունակական մասնագիտական կատարելագործում

❖ Պահանջներ՝

- Տեխնիկական գիտությունների մագիստրոս կամ ավելի բարձր
- Առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ
- CAD ծրագրի իմացություն (ցանկալի է Autodesk Inventor)
- Նյութագիտության ոլորտի իմացություն
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ղեկավար պաշտոնում
- Ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն
- Միջանձնային հաղորդակցության բարձր մակարդակ

Դիմելու ընթացակարգը՝

Հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են նշված պահանջներին, կարող են իրենց ինքնակենսագրականը (CV) ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեին՝ galyan@asls.candle.am կամ lilit_galyan@yahoo.com:

Խնդրում ենք Ձեր էլ. նամակի վերնագրի տողում նշել՝ «Ինժիներատեխնոլոգիական բաժնի ղեկավար»:

CANDLE SYNCHROTRON RESEARCH INSTITUTE

Title: Head of Engineering-Technological Department

Deadline: 30.12.2021

DURATION: 1 Year, extension to 3 years, Long-term contract

LOCATION: Yerevan

Job Description:

CANDLE SRI is looking for a qualified person for the position of “Head of Engineering-Technological Department”. The main activities of the laboratory are to design, fabricate, purchase, assemble, test, mount and maintain components of accelerator systems and sub-systems. The department is responsible, also, for the design, fabrication, maintenance and upgrade of mechanical, experimental components used in other laboratories. The expected candidate will organize the work of the laboratory, communicate with other laboratories to synchronize the work process, be able to resolve critical situations, make decisions and take responsibility related to systems, assemblies and components. To merge to CANDLE activities, the successful candidate should have required skills to participate/conduct regularly organized local and international student practical courses on vacuum systems. A supervision of bachelor, master and PhD theses will highly be appreciated.

Key responsibilities:

- Determines the technical policy and directions of technical development of the department
- Ensures an increase in production efficiency and labor productivity, cost reduction, rational use of production resources, compliance of the work performed and its results with the required level and quality
- Manages the development of measures for the reconstruction and modernization of equipment
- Organizes and plans experiments in the laboratories of the engineering and technical department
- Organizes and plans maintenance, repair and upgrade of vacuum, cooling and other systems and equipment
- Monitors compliance with design, engineering and technological discipline, rules and regulations on labor protection, safety, industrial sanitation and fire safety, requirements of environmental, sanitary authorities, as well as bodies performing technical supervision
- Ensures timely preparation of technical documentation
- Organizes scientific research and experiments, tests of new equipment and technologies, as well as works in the field of scientific and technical information, rationalization and invention
- Organizes advanced training of engineers and ensures continuous professional improvement of personnel

Requirements:

- Master or higher degree in technical science
- Mechanical background (mechanical engineering, metallurgy, theoretical mechanics, machinery, etc.)
- At least 5 years of overall professional experience
- Familiarity with CAD software (preferably Autodesk Inventor)
- Familiarity with tolerance systems
- Experience in metal cutting processes
- Knowledge in materials science
- At least 2 years of work experience in management position

- Fluency in Russian and English
- High level of interpersonal communication

How to Apply:

Interested candidates, who meet the requirements above, are welcome to send their detailed CVs to galyan@asls.candle.am or lilit_galyan@yahoo.com. Please, indicate the position title (Head of Engineering-Technological Department) in the subject line of the e-mail.